Գլխավոր տեղեկություն

Համար	թիվ 32-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Ինկորպորացիա (18.11.2023-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2023.11.13-2023.11.26 Պաշտոնական հրապարակման օրը 17.11.2023
Ընդունող մարմին	Վիճակագրության պետական խորհուրդ
Ընդունման ամսաթիվ	14.11.2023
Ստորագրող մարմին	Վիճակագրության պետական խորհրդի նախագահ
Ստորագրման ամսաթիվ	14.11.2023
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	18.11.2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«14» նոյեմբեր 2023 թ. թիվ 32-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2019 թվականի հուլիսի 12-ի ««Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների, բազմամյա տնկարկների տարածությունների, համախառն բերքի և միջին բերքատվության մասին» ՁԼ 29-ԳՏՀ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 39-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 37-Ն որոշման.

1) վերնագրում «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների, բազմամյա տնկարկների տարածությունների, համախառն բերքի և միջին բերքատվության մասին» բառերը փոխարինել «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների, բազմամյա տնկարկների տարածությունների և դրանցից ստացված համախառն բերքի ու միջին բերքատվության մասին» բառերով,

2) 1-ին և 2-րդ կետերով հաստատված հավելված 1-ը և հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի,

3) 2-րդ կետից հանել «ձևի» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախագահ՝ **Ս. Մնացականյան**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական
խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 14-ի
թիվ 32-Ն որոշման

«Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական
խորհրդի 2019 թվականի հուլիսի 12-ի
թիվ 37-Ն որոշման

ՁԵՎ 29 - ԳՏՀ
(տարեկան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԻ ՈՒ ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

20 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ

Ներկայացվում է համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 05-Ն որոշման:

Հաշվետվության ներկայացման ժամկետը՝ **մինչև հաշվետու տարվա դեկտեմբեր ամսվա 11-ը**

Ներկայացնում է _____
(լրիվ անվանումը)

Կազմակերպական-իրավական ձևը _____

Գործունեության իրականացման վայրի

Մարզը/քաղաք Երևան _____

Համայնքը _____

Բնակավայրը/Երևան քաղաքի վարչական շրջանը _____

Հասցեն _____ ☐☐☐☐
(փողոցը, շենքը, բնակարանը) *(փոստային դասիչ)*

Պետական ռեգիստրում գրանցման համարը ☐☐☐ ☐☐☐ ☐☐☐☐☐☐☐
(լրացվում է համաձայն գրանցման վկայականի)

Իրավաբանական անձի կոդը (ՁԿԴ) ☐☐☐☐☐☐☐☐
(լրացվում է համաձայն գրանցման վկայականի)

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) ☐☐☐☐☐☐☐☐

Հեռախոսահամար(ներ) _____

Էլեկտրոնային փոստ _____@_____

ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ

Պաշտոնական վիճակագրական հաշվետվությունները չներկայացնելը կամ սահմանված կարգի խախտմամբ ներկայացնելը՝ առաջացնում է վարչական պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

Բաժին 1. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների, համախառն բերքի և միջին բերքատվության մասին

Ցուցանիշի անվանումը	Տողի ծածկագիրը	Ցանքային տարածություն, հեկտար	Ընդհանուր բերքահավաքի տարածություն, հեկտար	Հավաքված է բերք, ընդամենը, ցենտներ		Բերք հավաքված, ցենտներ		Միջին բերքը մեկ հեկտարից, գ/հա (սյ3 / սյ2)
				սկզբնական քաշ	մաքրումից (զտումից) հետո քաշ	կրկնակի ցանքերից	պտղի և խաղողի այգիների միջշարքային տարածություններից	
Ա	Բ	1	2	3	4	5	6	7
Հացահատիկային մշակաբույսեր, ընդամենը (100.1+...+100.11)	100							
Աշնանացան ցորեն	100.1							
Աշնանացան տարեկան	100.2							
Աշնանացան գարի	100.3							
Այլ աշնանացան հացահատիկային մշակաբույսեր	100.4							
Գարնանացան ցորեն	100.5							
Գարնանացան տարեկան	100.6							
Գարնանացան գարի	100.7							
Վարսակ	100.8							

Ցուցանիշի անվանումը	Տողի ծածկագիրը	Ցանքային տարածություն, հեկտար	Ընդհանուր բերքահավաքի տարածություն, հեկտար	Հավաքված է բերք, ընդամենը, ցենտներ՝ սկզբնական քաշ	Հավաքված է բերք, ընդամենը, ցենտներ՝ մաքրումից (զտումից) հետո քաշ	Բերք հավաքված, ցենտներ՝ կրկնակի ցանքերից	Բերք հավաքված, ցենտներ՝ պտղի և խաղողի այգիների միջշարքային տարածություններից	Միջին բերքը մեկ հեկտարից, ց/հա (այ3 / այ2)
Ա	Բ	1	2	3	4	5	6	7
Հաճար	100.9							
Եգիպտացորեն՝ լրիվ հասունացած, հատիկի համար	100.10							
Այլ գարնանացան հացահատիկային մշակաբույսեր	100.11							
Աշնանացանից լրիվ ոչնչացել է մինչև գարնանացան մշակաբույսերի ցանքի ավարտը	105		X	X	X	X	X	X
Հատիկաընդեղենային մշակաբույսեր, ընդամենը (110.1+…+110.5)	110							
Ոլոռ, հատիկի համար	110.1							
Լոբի	110.2							
Սիսեռ	110.3							
Ոսպ	110.4							
Այլ	110.5							
Տեխնիկական մշակաբույսեր, ընդամենը (115.1+…+115.5)	115							
Ծխախոտ (հաշվարկային քաշով)	115.1							
Կտավատ	115.2							
Արևածաղիկ (յուղատու և հրուշակեղենի)	115.3							
Շաքարի ճակնդեղ	115.4				X			
Այլ	115.5			X	X	X	X	X
Կարտոֆիլ	120				**X**			
Բոստանային մշակաբույսեր, ընդամենը (125.1+…+125.4)	125				**X**			
Ձմերուկ	125.1				X			
Սեխ	125.2				X			
Այլ	125.3				X			
Սերմադաշտեր	125.4				X	X	X	
Բանջարանոցային մշակաբույսեր՝ ներառյալ աշնանը ցանվածը, (առանց ջերմատների և ջերմոցների), ընդամենը (130.1+…+130.13)	130				**X**			
Կաղամբ, *որից*՝	130.1				X			
ծաղկակաղամբ	130.1.1				X			
Վարունգ	130.2				X			
Լոլիկ	130.3				X			
Սմբուկ (բադրիջան)	130.4				X			
Տաքդեղ (բիբար)	130.5				X			
Սեղանի ճակնդեղ	130.6				X			
Գազար	130.7				X			
Սոխ	130.8				X			
Սխտոր	130.9				X			
Կանաչ ոլոռ	130.10				X			
Կանաչ լոբի	130.11				X			
Այլ	130.12				X			
Սերմադաշտեր	130.13				X	X	X	
Բանջարաբոստանային մշակաբույսեր (առանց ջերմատների և ջերմոցների), ընդամենը (125+130)	135				**X**			
Մշակաբույսեր ջերմատներում և ջերմոցներում, ընդամենը (140.2+140.3+140.4), *որից*՝	140			**X**	**X**	**X**	**X**	**X**
ջերմատներում	140.1			X	X	X	X	X
Ընդամենը տող 140-ից՝ բանջարեղեն ջերմատներում և ջերմոցներում, ընդամենը (140.2.1+140.2.2+140.2.3+140.2.4), *այդ թվում*	140.2				X		X	
վարունգ	140.2.1				X		X	
լոլիկ	140.2.2				X		X	
տաքդեղ (բիբար)	140.2.3				X		X	
այլ	140.2.4				X		X	
ծաղիկ ջերմատներում և ջերմոցներում, ընդամենը (սյուն 3-ը հատով)	140.3				X	X	X	X
այլ մշակաբույսեր ջերմատներում և ջերմոցներում, ընդամենը	140.4			X	X	X	X	X
Սունկ (ներառյալ ջերմատան ու ջերմոցի), ընդամենը (մ²), *որից*՝	145				**X**	**X**	**X**	**X**
ջերմատներում և ջերմոցներում, ընդամենը	145.1				**X**	**X**	**X**	**X**
Ծաղիկ առանց ջերմատան և ջերմոցի, ընդամենը (սյուն 3-ը հատով)	150				**X**	**X**	**X**	**X**
Կերային մշակաբույսեր, ընդամենը (155.1+155.2+155.3+155.4+155.5+155.6+155.7)	155			**X**	**X**	**X**	**X**	**X**
Կերի արմատապտուղներ՝ ներառյալ շաքարի ճակնդեղ անասնակերի համար, *որից*՝	155.1				X			
սերմադաշտեր	155.1.1				X	X	X	
Բոստանային մշակաբույսեր անասնակերի համար	155.2				X			
Եգիպտացորեն՝ սիլոսի, կանաչ կերի և սենաժի համար (կանաչ զանգված), ընդամենը, որից՝	155.3				X			
սիլոսի համար	155.3.1	X			X			
Սիլոսային մշակաբույսեր (առանց եգիպտացորենի)	155.4				X			
Միամյա խոտեր, ընդամենը, *որից*՝	155.5		X	X	X	X	X	X
օգտագործված են խոտի համար	155.5.1	X			X			
օգտագործված են կանաչ կերի, սենաժի և այլի համար (կանաչ զանգված)	155.5.2	X			X			
Բազմամյա խոտերի ընթացիկ տարվա ցանք (ներառյալ անցած տարվա աշնան ցանածը), որից՝	155.6		X	X	X	X	X	X
օգտագործված են խոտի համար	155.6.1	X			X			
օգտագործված են կանաչ կերի, սենաժի և այլի համար (կանաչ զանգված)	155.6.2	X			X			
Բազմամյա խոտերի անցյալ տարիների ցանք, ընդամենը, որից՝	155.7		X	X	X	X	X	X
օգտագործված են խոտի համար	155.7.1	X			X			
օգտագործված են կանաչ կերի, սենաժի և այլի համար (կանաչ զանգված)	155.7.2	X			X			
Բազմամյա խոտեր սերմերի համար, ընդամենը,								

որից՝ **Ցուցանիշի անվանումը**	155.8	**Ցան-**		**Հավաքված է**		**Բերքի հավաքված,**		
առվույտ	155.8.1	**քային**		**բերք, ընդամենը,**		**ցենտներ**		
կորնգան	155.8.2	**տարա-**		**ցենտներ**				
Թելատու մշակաբույսեր, ընդամենը (160.1+160.2)	160	**ծություն,**	**Ընդհա-**				**պտղի և**	
Բամբակ	160.1	**հեկտար**	**նուր**				**խա-**	**Միջին**
Այլ	160.2		**բերքա-**		**մաքրու-**		**դոհի**	**բերքը մեկ**
Ընդամենը ցանքային տարածություն 20 թ. բերքի տակ (100+110+115+120+135+140+150+155+160)	**Տոհի ծածկա-գիրը** 165		**հավաքի տարածու-թյուն, հեկտար**	**սկզբնա-կան քա2**	**մից (զտու-մից) հետո քա2**	**կրկնակի ցանքերից**	**այգի-ների միջշար-քային տարա-ծություն երից**	**հեկտարից, g/հա (սյ3 Х սյ2)**
որից՝ ցանված է պտղատու այգիների և խաղողի այգիների միջշարքային տարածություններում	165.1		X	X	X	X	X	X
Կատարվել է կրկնակի ցանք	170		**X**	**X**	**X**	**X**	**X**	**X**
Կատարվել է ենթացանք, ներառյալ աշնանը կատարվածը, *որից՝*	175		**X**	**X**	**X**	**X**	**X**	**X**
բազմամյա խոտերի	175.1				X	X	X	
Բնական խոտհարքներ, ընդամենը, *որից՝*	180	**X**			**X**	**X**	**X**	
օգտագործված են խոտի համար	180.1	X			X	X	X	
Հավաքված է խոտ չօգտագործված վարելահողերից	185	**X**			**X**	**X**	**X**	
Ցելերի տարածությունը (ներառյալ սիդերալ և կուլիսային, ինչպես նաև սև ցելեր)	190		**X**	**X**	**X**	**X**	**X**	**X**

Բաժին 2. Բազմամյա տնկարկների տարածությունների, համախառն բերքի և միջին բերքատվության մասին

Ցուցանիշի անվանումը	**Տողի ծածկա-գիրը**	**Ընդամենը տնկարկ-ներ, հեկտար**	*որից՝* **տնկարկներ պտղատու հասակի, հեկտար**	**Փաստացի հավաքված բերքը, ցենտներ**		**Միջին բերքը մեկ հեկտարից, g/հա (սյ 4/սյ 2)**
				Ընդա-մենը բացի **200.6 տողից**	*որից՝* **պտղատու հասակի տնկարկներից**	
Ա	**Բ**	**1**	**2**	**3**	**4**	**5**
Պտուղ և հատապտուղ (առանց ջերմատների և ջերմոցների), ընդամենը (200.1+.....+200.7), *այդ թվում՝*	200					
հնդավոր, ընդամենը	200.1					
կորիզավոր, ընդամենը	200.2					
ընկուզապտուղ, ընդամենը	200.3					
մերձարևադարձային, ընդամենը	200.4					
այլ, ընդամենը	200.5					
պտղի տնկարան (սյուն 3-ը հատով)	200.6		X		X	X
հատապտուղ բաց դաշտում, ներառյալ **պտղատու տնկարկների միջշարքային տարածություններում տնկվածը և տնկարանները, ընդամենը,** *որից՝*	200.7					
ելակ	200.7.1					
Հատապտուղ ջերմատներում և ջերմոցներում, ընդամենը, *որից՝*	205					
ելակ	205.1					
Խաղող (ներառյալ տնկարանները), ընդամենը, *որից՝*	210					
խաղողի տնկարան (սյուն 3-ը հատով)	210.1		X		X	X

Ղեկավար՝

	_____ (Ազգանուն, անուն)	_____ (Ստորագրություն)
Լրացնող (լիազորված անձ)՝	_____ (Ազգանուն, անուն)	_____ (Ստորագրություն)

«- - »_____ 20__թ.»:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական
խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 14-ի
թիվ 32-Ն որոշման

«Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական
խորհրդի 2019 թվականի հուլիսի 12-ի
թիվ 37-Ն որոշման

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԻ ՈՒ ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՁԵՎ 29-ԳՏՀ (ՏԱՐԵԿԱՆ) ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրահանգը կարգավորում է «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների, բազմամյա տնկարկների տարածությունների և դրանցից ստացված համախառն բերքի ու միջին բերքատվության մասին» ՁԵՎ 29-ԳՏՀ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) լրացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հաշվետվությունը ներկայացնում են համայնքապետարանները, որոնք այդ մասին իրազեկվում են Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի՝ 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 05-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներին համապատասխան:

3. Հաշվետվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե՝ հաշվետվության ձևի վրա նշված ժամկետում և պարբերականությամբ՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ի դրությամբ, աճողական՝ տարվա սկզբից:

4. Հաշվետվության ներկայացման հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

5. Հաշվետվության ցուցանիշները ներառում են միայն տվյալ համայնքի անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններին (անկախ նրանից, թե տնտեսություն վարողը տվյալ համայնքի մշտական բնակիչ է, թե՝ ոչ) վերաբերող ամփոփ տվյալներ:

6. Սույն հրահանգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածություն՝** գյուղատնտեսական նշանակության հողերի՝ վարելահողի, խոտհարքների, արոտավայրերի, պտղատու այգիների ու խաղողի այգիների միջշարքային տարածություններում և այլ հողերի վրա բոլոր տեսակի գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման նպատակով փաստացի կատարված ցանքի, ներառյալ կրկնակի ցանքի և ենթացանքի տարածություններ՝ հաշվետու ժամանակահատվածում,

2) **միջին բերքատվություն՝** հաշվարկվում է՝ հավաքված բերքի ցուցանիշը (առանց պտղատու այգիների ու խաղողի այգիների միջշարքային տարածություններից և կրկնակի ցանքի տարածություններից հավաքված բերքի) հարաբերելով բերքահավաքի տարածության ցուցանիշի վրա,

3) **կրկնակի ցանք՝** հիմնական մշակաբույսի բերքահավաքից հետո միևնույն տարածության վրա մեկ այլ մշակաբույսի ցանք, որի նպատակն է միևնույն տարածությունից մեկից ավելի անգամ ստանալ բերք,

4) **ենթացանք՝** միևնույն հողակտորում միաժամանակ մեկից ավելի գյուղատնտեսական մշակաբույսերի խառը ցանք,

5) **ջերմատներ՝** տարբեր չափերի կառույցներ, որոնք հագեցած են ջերմատնային կոնստրուկցիաներով, սարքավորումներով, ջեռուցվում են և հնարավորություն են տալիս ողջ տարվա ընթացքում զբաղվել բուսաբուծական արտադրանքի արտադրությամբ (մշակել բանջարանոցային մշակաբույսեր, աճեցնել ծաղիկներ, սածիլներ, հատապտուղներ և այլն),

6) **ջերմոցներ՝** կառույցներ, որոնք կարող են ունենալ շարժական ծածկոցներ (շրջանակներ՝ ապակեպատ կամ թաղանթապատ), որոնց շահագործումը հնարավորություն է տալիս աճեցնել սածիլներ, ծաղիկներ և մշակել բանջարեղեն, հատապտուղներ և այլն (ջերմատներից տարբերվում են նրանով, որ չունեն ջեռուցման համակարգ),

7) ցել՝ գյուղատնտեսական հողատեսք, ցանքաշրջանառության դաշտ, վարած հող, որն ամբողջ վեգետացիայի (կամ դրա մի մասի) ընթացքում չի զբաղեցվում ցանքերով և համարվում է հողի բերրիության բարձրացման, խոնավության և սննդանյութերի կուտակման, մոլախոտերի ոչնչացման, բերքատվության բարձրացման արդյունավետ ագրոտեխնիկական միջոցառում,

8) **սև ցելեր՝** հողատարածություններ, որոնք հերկվել են նախորդ տարվա աշնանը և ցանքերի եզրափակիչ հաշվառում կատարելու պահին զբաղեցրած չեն գարնանացան մշակաբույսերի ցանքերով,

9) **մաքուր ցելեր՝** հողատարածություններ, որոնք հերկվել են գարնանը և մինչև աշնանացան պահպանվել են մաքուր վիճակում,

10) **սիդերալ ցելեր՝** հողատարածություններ, որոնց վրա ցանվել է հատիկաընդեղեն մշակաբույսեր, որը կանաչ վիճակում հերկվում է, որպեսզի հողը հարստացվի օրգանական նյութերով,

11) **կուլիսային ցելեր՝** հողատարածություններ, որոնց վրա կատարվել է բարձրացողուն մշակաբույսերի ցանք՝ նպատակ ունենալով դաշտում ձմռանը ձյուն կուտակել:

3. ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7. «Բաժին 1. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների, համախառն բերքի և միջին բերքատվության մասին» բաժնում.

1) **«Ցանքային տարածությունը»** սյունակում («100»-«190» ծածկագրերով տողեր) լրացվում են (ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ի դրությամբ) ճշտված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների վերաբերյալ ցուցանիշներ:

2) **«Ընդհանուր բերքահավաքի տարածությունը»** սյունակում («100»-«190» ծածկագրերով տողեր) լրացվում են ցուցանիշներ գյուղատնտեսական մշակաբույսերի այն տարածությունների վերաբերյալ, որոնցից հաշվետու ժամանակահատվածում բերք է հավաքվել: Այս ցուցանիշների մեջ չեն ներավառում պտղատու այգիների և խաղողի այգիների միջշարքային տարածություններում կատարված, ինչպես նաև կրկնակի և ենթացանքի՝ հիմնական չհամարվող մշակաբույսերի, ցանքերի տարածությունները:

3) **«Հավաքված է բերք, ընդամենը»** սյունակում («100»-«190» ծածկագրերով տողեր) լրացվում են բերքահավաքի ամբողջ տարածությունից հավաքված բերքի վերաբերյալ ցուցանիշներ (համախառն բերքը): Այս ցուցանիշները չեն ներառում հիմնական չհամարվող կրկնակի ցանքերից, ենթացանքից և պտղատու այգիների ու խաղողի այգիների միջշարքային տարածություններից հավաքված բերքը:

4) **«Բերք հավաքված կրկնակի ցանքերից, պտղատու այգիների և խաղողի այգիների միջշարքային տարածություններից»** սյունակում («100»-«190» ծածկագրերով տողեր) լրացվում են կրկնակի ցանքերից և պտղատու այգիների ու խաղողի այգիների միջշարքային տարածություններից հավաքված բերքի վերաբերյալ ցուցանիշներ:

5) **«Միջին բերքը մեկ հեկտարից»** սյունակում («100»-«190» ծածկագրերով տողեր) լրացվում են մշակաբույսերի միջին բերքատվության (սյունակ 3 հարաբերած սյունակ 2) վերաբերյալ ցուցանիշներ:

6) **«100»-«100.11» ծածկագրերով տողերում** լրացվում են աշնանացան (ցորեն, տարեկան, գարի և այլ) և գարնանացան (ցորեն, տարեկան, գարի, վարսակ, հաճար, եգիպտացորեն հատիկի համար և այլ) հացահատիկային մշակաբույսերի վերաբերյալ ցուցանիշներ:

7) **«105» ծածկագրով տողում** լրացվում է բոլոր տեսակի աշնանացան հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, տարեկան, գարի և այլ) և այլ աշնանացան մշակաբույսերի այն տարածությունների հանրագումարը, որոնց վրա անցած աշնանը կատարված ցանքերը լրիվ ոչնչացել են:

8) **«110»- «110.5» ծածկագրերով տողերում** լրացվում են հատիկաընդեղենային (ոլոռ, լոբի, սիսեռ, ոսպ և այլ) մշակաբույսերի վերաբերյալ ցուցանիշներ:

9) **«115»-«115.5» ծածկագրերով տողերում** լրացվում են տեխնիկական (ծխախոտ՝ հաշվարկային (չոր քաշով), կտավատ, արևաածաղիկ, շաքարի ճակնդեղ և այլ) մշակաբույսերի վերաբերյալ ցուցանիշներ:

10) **«120» ծածկագրով տողում** լրացվում են կարտոֆիլի վաղահաս, միջահաս և ուշահաս տեսակների վերաբերյալ ցուցանիշներ:

11) **«125»-«125.4» ծածկագրերով տողերում** լրացվում են բոստանային (ձմերուկ, սեխ, այլ և սերմադաշտեր) մշակաբույսերի վերաբերյալ ցուցանիշներ:

12) **«130»-«130.13» ծածկագրերով տողերում** լրացվում են բանջարանոցային (կաղամբ, ծաղկակաղամբ, վարունգ, լոլիկ, սմբուկ (բադրիջան), տաքդեղ (բիբար), սեղանի ճակընդեղ, գազար, սոխ, սխտոր, կանաչ ոլոռ, կանաչ լոբի, այլ և սերմադաշտեր) մշակաբույսերի վերաբերյալ ցուցանիշներ (առանց ջերմատների և ջերմոցների):

13) **«140» ծածկագրով տողում** լրացվում են միայն պաշտպանված գրունտում աճեցված մշակաբույսերի (ներառյալ սածիլների, ծաղկի տնկանյութի և այլնի) ցանքային տարածությունների և բերքահավաքի տարածությունների վերաբերյալ ցուցանիշներ:

14) **«140.2»-«140.4» ծածկագրերով տողերում** լրացվում են միայն ջերմատներում և ջերմոցներում աճեցված բանջարեղենի, դրանից վարունգի, լոլիկի, տաքդեղի (բիբարի) և այլնի (չթվարկված մյուս բոլոր բանջարանոցային մշակաբույսերը ներառյալ կանաչեղենը), ինչպես նաև ծաղկի ու այլ (կարտոֆիլ և այլ) մշակաբույսերի վերաբերյալ ցուցանիշներ:

14) **«155»–«155.8.2» ծածկագրերով տողերում** լրացվում են կերային մշակաբույսերի (կերի արմատապտուղներ՝ ներառյալ շաքարի ճակնդեղ անասնակերի համար, բոստանային մշակաբույսեր անասնակերի համար, եգիպտացորեն՝ սիլոսի, կանաչ կերի և սենաժի համար, սիլոսային մշակաբույսեր, միամյա ու բազմամյա խոտեր և այլ) վերաբերյալ ցուցանիշներ:

15) **«160»–«160.2» ծածկագրերով տողերում** լրացվում են թելատու (բամբակ և այլ) մշակաբույսերի վերաբերյալ ցուցանիշներ:

16) **«190» ծածկագրով տողում** լրացվում է բոլոր տեսակի ցելերի տարածությունների հանրագումարը:

8. «Բաժին 2. Բազմամյա տնկարկների տարածությունների, համախառն բերքի և միջին բերքատվության մասին» բաժնում.

1) **«200»–«200.7.1» ծածկագրերով տողերում** լրացվում են **հնդավոր** (խնձոր, տանձ, սերկևիլ և այլ), **կորիզավոր** (ծիրան, դեղձ, կեռաս, սալոր, բալ, հոն և այլ), **ընկուզապտուղ** (ընկույզ, տխիլ և այլ), **մերձարևադարձային** (թուզ, նուռ, արքայանարինջ և այլ), **այլ** (վերը նշված պտղաընտանիքներում չներառված պտղատեսակներ) պտղաընտանիքների, **պտղի տնկարանների** և **բաց դաշտում աճեցված հատապտուղների** (թութ, ելակ, մոշ, ազնվամորի, կիվի և այլ) ու դրանից **ելակի** վերաբերյալ ցուցանիշներ:

2) **«205» ծածկագրով տողում** լրացվում են միայն պաշտպանված գրունտում աճեցված հատապտուղների (ելակ, մոշ, ազնվամորի, կիվի և այլ) վերաբերյալ ցուցանիշներ, իսկ **«205.1» ծածկագրով տողում** լրացվում են միայն ջերմատներում և ջերմոցներում աճեցված ելակի վերաբերյալ ցուցանիշներ:

3) **«210»–«210.1» ծածկագրերով տողերում** լրացվում են խաղողի տեխնիկական, սեղանի, ունիվերսալ սորտերի և խաղողի տնկարանների վերաբերյալ ցուցանիշներ: »:

Պաշտոնական հրապարակման օրը՝ 17 նոյեմբերի 2023 թվական: